ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2019 թվականի ապրիլի 30-ի նիստի N 11 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգը քննարկելու և հաստատելու** ու գիտական խորհրդի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում (արձանագրություն N 4) հաստատված Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը:

Զեկուցող՝ ռեկտորի պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ.Ա.Հայրապետյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Մ.Ս.Մելքումյանը, Ա.Ա.Թավադյանը, Դ.Ռ.Գալոյանը, Ա.Բ.Սալնազարյանը, դոցենտներ Թ.Մ.Մկրտչյանը, Ա.Մ.Քթոյանը, Մ.Ս.Մարդումյանը, Կ.Հ.Գրիգորյանը, Ա.Վ.Գրիգորյանը, Ա.Գ.Հակոբյանը, Լ.Ն.Մեհրաբյանը, Մ.Լ.Աղալովյանը, գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Տ.Ս.Մնացականյանը, ֆինանսական տնօրեն Մ.Ա.Փարվանյանը, արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Պ.Վ.Ջանգուլյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **1. Հաստատել** «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգը:

2. Ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում (արձանագրություն N 4) հաստատված Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը:

3. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ կողմ՝ 54, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2019 թ. ապրիլի 12
Երևան